Հ. ՄՈՍԿՈՖԵԱՆ՝ ՀԱՐՑԱԶՐՈՅՑՆԵՐ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Posted on August 27, 2011 by Keghart



Category: Opinions

Լիբանանահայ Զորավար Ու Նախարար՝ Փանոս Մանճեան

Հրց.- *Պարոն զորավար եւ նախարար, Լիբանանի հայությունը ցնծությամբ ընդունեց այն լուրը, որ դարձել էիք լիբանանյան բանակի հայազգի զորավար եւ այժմ պետական նախարար: Կարո՞ղ եք դուք ձեզ ներկայացնել մեր ընթերցողներին:*

Պատ.- Այո, զորավար եւ Նախարար Փանոս Մանճեան, ծնվել եմ 3 դեկտեմբեր 1952-ին Բեյրութում, բնիկ մուսատաղցի ընտանիքում. Բնակվել եմ նաեւ Այնճարում եւ Լիբանանի մայրաքաղաքում: 12 Նոյեմբեր 1972 թվին կամավոր անցել եմ լիբանանյան բանակ, 3 տարում ավարտելով զինվորական համալսարանը, արժանացել եմ ՝մեկ աստղով տեղակալ՚ի, ապա 38 տարի ծառայելով լիբանանեան բանակում հասել եմ 2010 թվին հանգստյան կոչվելուց առաջ՝ բրիգադի գեներալի եւ բանակի հրամանատարի օգնականի պաշտոններին: Հանգստյան կոչվելուց 6.5 ամիս ետք, Լիբանանի Հ.Յ. Դաշնակցության Կենտրոնական Կոմիտեի կողմից առաջադրվեցի եւ դարձա Պետական Նախարար Լիբանանի նորընտիր կառավարությունում:

Լիբանանահայ Զորավար Ու Նախարար՝ Փանոս Մանճեան

Հրց.- *Պարոն զորավար եւ նախարար, Լիբանանի հայությունը ցնծությամբ ընդունեց այն լուրը, որ դարձել էիք լիբանանյան բանակի հայազգի զորավար եւ այժմ պետական նախարար: Կարո՞ղ եք դուք ձեզ ներկայացնել մեր ընթերցողներին:*

Պատ.- Այո, զորավար եւ Նախարար Փանոս Մանճեան, ծնվել եմ 3 դեկտեմբեր 1952-ին Բեյրութում, բնիկ մուսատաղցի ընտանիքում. Բնակվել եմ նաեւ Այնճարում եւ Լիբանանի մայրաքաղաքում: 12 Նոյեմբեր 1972 թվին կամավոր անցել եմ լիբանանյան բանակ, 3 տարում ավարտելով զինվորական համալսարանը, արժանացել եմ ՝մեկ աստղով տեղակալ՚ի, ապա 38 տարի ծառայելով լիբանանեան բանակում հասել եմ 2010 թվին հանգստյան կոչվելուց առաջ՝ բրիգադի գեներալի եւ բանակի հրամանատարի օգնականի պաշտոններին: Հանգստյան կոչվելուց 6.5 ամիս ետք, Լիբանանի Հ.Յ. Դաշնակցության Կենտրոնական Կոմիտեի կողմից առաջադրվեցի եւ դարձա Պետական Նախարար Լիբանանի նորընտիր կառավարությունում:

Հրց.- *Այսօր Լիբանանն ու տարածաշրջանը բարդ իրադարձություններ է ապրում: Ինչպէ՞ս եք տեսնում լիբանանահայության ու երկրի ապագան:*

Պատ.- Լիբանանահայությանը մեծ վտանգ չն սպառնում: Մենք ունենք մեր դպրոցներն ու եկեղեցիները, հայապահպանման բոլոր կառույցները եւ ամենաքիչ վտանգի ենթարկված համայնն ենք Լիբանանում: Ունենք բավականին օտարացում, խառնամուսնություններ, օտար դպրոցներում սովորող հայ ուսանողներ, բայց Ամերիկայի հետ բաղդատած առայժմ մեծ վտանգ չի համարվում, ինչը չի կարելի ասել

տնտեսական ճգնաժամի մասին, որն ստիպում է արտագաղթի։

Հրց.- *Արդյոք այցելե՞լ եք Արցախ եւ Հայաստան ու կապեր պահպանո՞ւմ եք Մայր Հայրենիքի զինվորական ու քաղաքական գործիչների հետ։*

Պատ.- Մեր զինվորական պաշտոնների բերմամբ կարելի չէր ճանապարհորդել...։ Միայն 2001 թվին առիթը ունեցել եմ լիբանանյան բանակի պատվիրակության հետ, 7 օրվա այցելությամբ լինել Հայաստանում։ Այնտեղ հանդիպել ենք հայկական բանակի ղեկավարության հետ, փոխադարձ համավորձակցության եւ օգնության ծրագրերով։ Հանդիպեցինք այն ժամանակ պաշտպանության նախարար, այժմ հանրապետության նախագահի հետ։ Մեր առաքելությունը Հայաստանում էր միայն, չկարողացանք լինել Արցախում դժբախտաբար։ Այդ հիշարժան օրվանից մինչեւ այսօր, մեր զինվորական պարտականությունների պատճառով կարելի չեղավ կապերը պահպանել Հայաստանի եւ Արցախի հետ։

Մենք առանց Հայաստանի չենք կարող ապրել եւ Հայրենիքը առանց մեզ։ Կոչ եմ անում աշխարհի բոլոր հայերին, իրենց բոլոր կարգի միջոցներով օգնեն Հայաստանին եւ Արցախին՝ հզորացնելու հայ ժողովուրդն ու հայրենիքը, հայապահպանման առաքելությունը շարունակելով հետագա ժամանակներին։

Հարցերն առաջադրեց՝ Համո Մոսկոֆյան, Բեյրութ, 22 Օգոստոս 2011

ԱՐԾՈՒԱԲՈՅՆ ԶԷՅԹՈՒՆԷՆ՝ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԱՐԱՏԻ ԳԱԳԱԹԸ

Հանրայայտ քանդակագործ, Զէյթունի հերոս Բարթողոմէոս Վրդ. Թագաճեանի շառաւիղ Ռաֆֆին Թօքաթլեանը, իրագործեց ամէն հայու վաղեմի երազը, բարձրանալով Սրբազան Արարատի գագաթը։ Հայ արուեստագէտը նախապէս բարձրացած էր Ափրիկէի ամէնէն բարձր ’’’կտուր’’ Քիլիմանճարօ, նաեւ շարք մը ուրիշ լեռներու գագաթներ, միաժամանակ ըլլալով նաեւ մարաթօն վազքի ախոյեաններէն մէկը։

Օգոստոսեան շոգը ետին ձգելով ’’Սփիւռքի մայրաքաղաք’ Պէյրութի մէջ, խումբ մը լիբանանցի խիզախներով, Ռաֆֆի Թօքաթլեան մեկնեցաւ Պոլիս. Վան՝ ապա հանրակառքով ժամանելով հայոց Սրբազան լեռան ստորոտը գտնուող ’Տօղու’ Պազազիտ (Պայազէտ) աւանը, անմիջապէս ձեռնարկեց այս դժուարին եւ հայրենասիրական ծրագրին իրագործման։

‘Քիւրտ ուղեկիցներու, խոհարարի ընկարակցութեամբ, առաջին 3200 մեթրը մասամբ ջորիներու վրայ բեռնուած մեր վրաններով եւ հանդերձանքով, Պայազէտ քաղաքէն բարձրացանք Արարատն ի վեր, ուր ամէն վարկեան մթնոլորտն ու օդին եղանակը կը փոխուէր...։ Արեւ, փոթորիկ, կարկուտ եւ ապա դարձեալ արեւ-տեղատարափ անձրեւն ու մրրիկը կարծես թէ կը փորձեն արմատախիլ ընել մեր վրանները, առաջին գիշերը։

Միւս օրը, առաւօտեան, մշուշոտ ու ամբողջովին քարածածկ, հրաբխային գորշ

ժայռերով զարդարուած այս դժուարին մագլցումով հասանք 4300 մեթր բարձրութեան, ապա, որպէսզի մերր թոքերն ու սիրտը վարժուէին բարձրութեան՝ վերադարձանք 3200 մեթրի վրայ գտնուող կայանը։ Միւս օրը, դարձեալ հասնելով 4300 մեթրի վրայ վրայ գտնուող մեր հանգրուանը, վրանները լարեցինք, ընթրեցինք ու կէս գիշերէն քիչ ետք, մեր գլուխներուն վրայ ամրացուած լուսարձակներով, ահաւոր ցուրտէն (-10-25 սանթիկրատ)՝ հասանք 5000 մեթր վճռական բարձրութեան։ Ապա սկսաւ Արարատի գագաթին վրայ դարերէ ի վեր ’բնակութիւն հաստատած’ սառցադաշտին յաղթահարումը, յատուկ, մեխածածկ կօշիկներով։ Ի վերջոյ, մէկուկէս ժամ ճակատագրական պայքարէ ետք ցուրտին եւ բարձրութեան դէմ, կարողացանք ի վերջոյ հասնիլ մեր երազանք-նպատակկէտին՝ Սրսազան Հայոց լեռան գագաթը։ Մեր աջին, ամպերու տակ փռուած էր այսօրուան Հայաստանը, Երեւանը, նախընին Արեւմտեան Հայաստանը եւ հարաւային կողմը՝ Իրանը։

Հակառակ յուզումին եւ անբացատրելի զգացումներուն, հնագոյն ժամանակներէ ի վեր հայոց կողմէ պաշտուածՄաբիբի կատարին վրայ կանգնած, Ռաֆֆի Թօքաթլեան կարողացաւ ’Թուրայա’ արբանեակային հեռախօսով կապուիլ Պէյրութի հայկական ռատիօկայանին հետ ու սրնթաց հովերուն հովերուն ու ցուրտին ընդմէջէն ողջոյններ ուղարկեց Լիբանանի հայոց, միաժամանակ պարզելով լիսանանեան դրօշը եւ նաեւ հայկական եռագոյնը՝ կատարին գտնուող իր ընկերներուն եւ ռուսահայ մագլցողներու հետ։ Ապա, յաղթանակի ժպիտը դէմքին, լուսանկարելով ու տեսաերիզի առնելով վայրէջքը՝ արշաւախումբը վերադարձաւ մեկնման կայանը, յաջորդ օրն ալ դէպի Պայազէտ, Վան, Պոլիս ու վերադարձ դէպի Պէյրութ։

’Արարատին գագաթը նուաճելը շատ դժուարին առաքելութիւն է։ Միայն 1828-ին է որ Խաչատուր Աբովեան եւ Փայօթ կարողացան հասնիք այնտեղ՝ ուր կը կարծուի թղ յաւերժ կանգնած է Ամյեան տապանը...։ Բոլով ցանկացողներուն կը մաղթեմ որ իրենք ալ կատարեն այս պատմական ուխտագնացութիւնը, բայց շատ լաւ նախապատրաստուելէ ետք՝ որովհետեւ կրնան վնանգել կեանքն իսկ’ կը զգուշացնէ քիբանանահայ քանդակագործը։

Իսկ այս կարեւոր նուաճումը իր հետքը պիտի թողո՞ւ ապագայ ստեղծագործութիւններուն մէվ՝ Ռաֆֆի Թօքաթլեան երազային ժպիտով կը պատասխանէ.

’Հիմա արդէն կը փորձեմ դուրս գազ երանութեան զգացումներէ եւ Սրբազան Լեռան թողած անջնջելի տպաւորութիւններէն։ Արարատին նուիրուած նոր ստեղծագործութիւններս ըլլան երեւի լաւագոյնները’ կը խոստանայ միշտ իր անսպասելի նուաճումներով եւ անակնկալներով ուրախացնող հայ արուեստագէտը։

Համօ Մոսկոֆեան, Պէյրութ, 18 Օգոստոս 2011

ՀԱՅ ՈՍԿԵՐԻՉՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ (AJA) ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ԳԵՒՈՐԳՅԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ

Լիբանանահայ գործարարների համախմբման եւ հայ ոսկերիչների միության նախաձեռնությամբ, Սփյուռքի “մայրաքաղաք” Բեյրութ այցելեց հայ ոսկերիչների միջազգային միության (AJA) Նախագահ Գագիկ Գևորգյանը: Ռուսաստանի ամենամեծ «Էստետ» ոսկերչական հաստատության հիմնադիրն ու սեփականատերը, իր «Էյ-Ջի-Էյ»-ի (AJA) նախագահ ընտրվելու առաջին օրից՝ ձեռնարկել էր “լճացած” կազմակերպությունը աշխուժացնելու, Սփյուռքում թե հայրենիքում, հնագույն արհեստ-արվեստը զարգացնելու ու միջազգային ցուցահանդեսներու միացյալ եւ հզոր ներկայութեամբ հանդես գալու հայրենասիրական բազմաթիվ ծրագրերով: Օգոստոսի 10-ին ժամանելով Բեյրութ, Նախագահ Գագիկ Գևորգյան ու պատվիրակությունը ջերմորեն ընդունվեցին Լիբանանահայ Գործարարների Համախմբման նախագահ Նազարեթ Սաբունջյանի եւ գործադիր վարչութեան անդամների, AJA -ի Լիբանանի ղեկավարության կողմից:

Այս միջազգային հայկական կազմակերպության փոխ-նախագահն է Պերճ Աբաջյանը, քարտուղարը՝ Հովեր Շնորհոքյանը, գործադիր վարչութեան անդամներ՝ Նազարեթ Սաբունջյանը եւ Հարրի Գազանջյանը: Իսկ Լիբանանի AJA-ի անդամներ՝ Լորանս Թյուֆենկջյանը, Հակոբ Տագեսյանը, Պետիկ Սաբունջյանը, Հակոբ Միսիրյանը, Վազգեն Հատիտյանը, իսկ Ալեքս Ֆեթթալը, Գրիգոր Եսայանը եւ Ռոնի Մալջյանը (որոնք Նախագահ Գագիկ Գևորգյանի այցելության օրերին աշխատանքով բացակայում էին Բեյրութից) կարեւոր աշխատանքներ էին կատարել հայ ոսկերիչների միջազգային միությունը կազմակերպելու եւ արժանի բարձրունքի վրա պահելու համար...:

Գործարար հանդիպումների հետ, Գագիկ Գևորգյանը այցելեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա. Վեհափառ հայրապետին, Անթիլիասի մայրավանքում: Երկժամյա հանդիպման ընթացքում քննարկվեցին հայապահպանման եւ արտագաղթի կասեցման, աշխատանքային տեղեր ապահովումը ոսկերչության միջոցով: Ինչպէս նաեւ հայ մշակույթի եւ հայ լեզվի զարգացմանը՝ AJA-ի շնորհիվ, հայ վարպետների ու ոսկերչական հաստատությունների միասին հաղորդակցվելու գործընթացներում:

Նախագահ Գագիկ Գևորգյանին ընդունեց նաեւ Լիբանանում Հ.Հ. Արտակարգ եւ Լիազոր Դեսպան Աշոտ Քոչարյանը, որն հաջողություն մաղթեց այս կարեւոր կազմակերպության առաքելությունը, մանավանդ որ առաջիկա Սեպտեմբերին՝ Հայաստանի Հանրապետության Հիմնադրության 20-ամեակի օրերին, քաղաքամայր Երեւանում տեղի է ունենալու ոսկերչության միջազգային ցուցահանդես, Սփյուռքից և արտասահմանից բազմաթիվ մասնակիցներով:

Հինգշաբթի, 11 Օգոստոսի 2011թ-ի երեկոյան, «Ռոյալ» հյուրանոցի շքեղ դահլիճում տեղի ունեցավ ճաշկերույթ՝ ի պատիվ հայ ոսկերիչների միջազգային միության Նախագահ Գագիկ Գևորգյանի: Ներկա էին Լիբանանահայ գործարարների

համախմբման ղեկավարությունը, գործադիր վարչության անդամները, AJA-ի պատվիրակությունը, ազգային դեմքեր, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ։

Ռուսաստանից ժամանած հայ պատվավոր հյուրին ու ներկաներին ողջունեց Նազարեթ Սաբունջյանը, հույս հայտնելով թե այս այցելությունը սկիզբ կլինի ավելի մեծ ծրագիրների իրագործմանը, ի փառս Սփյուռքին և հայրենիքին։ Ապա, ելույթ ունեցաւ Գագիկ Գևորգյանը, որ նշեց թե, աշխարհի բնակչության շուրջ 1 տոկոսը կազմող հայությունը այսօր արտադրում է մեր երկրագնդի ոսկերչական արտադրանքի 5 տոկոսը...։ Նա կարևորեց այս հնագույն, “հայկական” արհեստ-արվեստի դերը հայապահպանման, հայ ժողովրդի գոյատևման դարավոր պայքարում, որն շարունակվում է մինչև այսօր։

Նախագահ Գագիկ Գևորգյանը իր հիացմունքը հայտնեց նաև լիբանանահայության հայապահպանման մեծ գոյապայքարի հանդեպ, առանձնապես նշելով իր գործընկերների կազմակերպվածությունը, հայրենասիրությունը, հյուրընկալությունը, նա խոստացավ իր բոլոր միջոցները տրամադրել հայ ոսկերիչների միջազգային միությունը հասցնելու աշխարհի ամենաբարձր կազմակերպությունների մակարդակին՝ բոլորին ցույց տալու հայ ժողովրդի պատմությունն ու մշակույթը, ներդրումը մարդկային քաղաքականության մեջ։
Բուռն ծափահարություններով ընդունվելով ներկա ընտրանիի կողմից՝ ճաշկերույթը մինչև ուշ գիշեր շարունակվեց, փոխադարձ զրույցի եւ մտքերի փոխանակման հաճելի մթնոլորտում։

12 Օգոստոսին, շարունակելով իր գործնական հանդիպումները, միաժամանակ հարցազրույցներ տալով լիբանանահայ հեռուստատեսութեանը, Գագիկ Գևորգյանը հրաժեշտ տվեց Բեյրութին, մեկնելով Երևան ու Մոսկվա։

Բեյրութ, 15 Օգոստոս 2011

ԳՕԳՕ ՔԷԼԷՇԵԱՆ
ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՐԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻ ՓԱՅԼՈՒՆ "ԱՍՏՂ"Ը
«Կիլիկիա» պարախումբի ղեկավար եւ պարուսոյց՝ 1989թ-էն Լիբանանի Համազգայինի «Գայանէ» պարի դպրոցի աշակերտ եւ 1992թ-ին «Քնար» պարախումբի մենակատար՝ հայրենի արուեստի մասնագէտ Ֆելիքս Յարութիւնեանի ղեկավարութեամբ՝ Լիբանանահայ արուեստագէտ Գօգօ Քէլէշեանի նուաճումները պարարուեստի աշխարհին մէջ անհամար են...՝ Փայլող "աստղ" Պաալպաքի, Ճիպէյլի, Պէյթըտտինի միջազգային ֆեսթիվալներուն, նաեւ "Ռահպանի" (հիմնադրուած հռչակաւոր Ռահպանի եղբայրներու կողմէ) երգ ու պարի խումբին հետ շրջած է ամբողջ արաբական աշխարհն ու Միջին Արեւելքը՝ 2004թ-էն սկսեալ՝ 2005թ-ին, գլխաւոր մենակատարը պարային տեսարաններու մէջ՝ Սապպաղ եղբայրներու կողմէ բեմադրուած՝ «Չէ Կեւարա»

երաժշտախառն թատրոնին՝ Գօգօ Քէլէշեան ելոյթ ունեցած է, արբանեակային հեռաստիմամբ, LBC, NBC, FUTURE, եւ այլ հեռատեսիլի կայաններու զանազան ծրագիրներէն։

2005թ-ին «Կիլիկիա» պարախումբը հիմնադրած է եւ անոր ընդմէջէն իր մասնակցութիւնը կը բերէ զանազան հանդիսութիւններու, արուեստի թէ ազգային ուրախ իրադարձութիւններու մէջ, նաեւ, ուսումնասիրելով արաբ թէ օտար, կովկասեան պարերն ու աւանդոյթները՝ զանազան բեմերէն ներկայացնելով զանոնք, արժանանալով բոլորին հիացմունքին եւ գնահատանքին։ Վրացական «Սուքիշվիլլի» պարարուեստի դպրոցի հանրաճանաչ ղեկավարներ Նինօ եւ Իլիքօ Սուքիշվիլլիները՝ Գօգօ Քէլէշեանը պարգեւատրած են յատուկ վկայականով, որպէս կովկասեան ժողովուրդներու պարարուեստը ներկայացնող "դեսպան"։
-"Նպատակս է հայկական պարը ուրիշ մակարդակի վրայ բարձրացնել տարբեր տեսակի ժողովրդային ու հայկական պարարուեստի դպրոցները կապակցելով։ Պէտք է հայկական պարը միշտ վերելքի վրայ պահել, որովհետեւ ազգի ինքնութիւնը կը ներկայացնէ։ Պէտք է այս առիթով յիշել հայ պարարուեստի դպրոցի լաւագոյն մենակատարներ՝ Ռուդիկ Կոջոյեանն ու Ռաշիտ Կարապետեանը, որոնք Խ. Միութեան օրոք կարողացան պարարուեստի միջոցով հայ ժողովուրդը ներկայացնել ամէնուրեք", պատմեց Գօգօ Քէլէշեան։

Նորանոր ծրագիրներ ու յաջողութեան եւ նուաճումներու իրագործման ճանապարհին, ակամայ հրաժեշտ կու տանք Լիբանանի պարարուեստի աշխարհի փայլուն "աստղ"-ին դարձեալ հանդիպելու ակնկալիքով։

Պէյրութ, 8 Օգոստոս 2011

Գանատահայ երաժիշտ, երգիչ Գեւորգ Արթինեան

«Հայ երաժշտութիւնը շատ կարեւոր դեր կը խաղայ հայապահպանման պայքարին մէջ»

Հրց.- *Հայ, այժմ Գանատայի քաղաքացի, երաժիշտ եւ արուեստագէտ, երգիչ՝ կրնա՞ս որոշ տեղեկութիւններ տալ մեր ընթերցողներուն գործունէութեանդ ու կեանքիդ մասին։*
Պատ.- Ծանօթանանք. Գեւորգ Արթինեան, ծնունդով լիբանանցի եմ, 25 տարեկան, շուրջ տասնամեակէ մը ի վեր կը բնակիմ Գանատա։ Որոշ սկզբնական դժուարութիւններէ ետք, 'Նոր Սերունդ' նուագախումբը կազմեցինք Մոնթրէալի մէջ։ 4 տարի ելոյթներէ ետք, այժմ 5 տարիներէ ի վեր կ'աշխատիմ Ճօրճ Տեփրէճեանին հետ, երաժշտական բնագաւառին մէջ։ Ինք կը յօրինէ երգերս ու երաժշտութիւնը, երգեհոնահարս է։ Կ'երգեմ արեւմտահաերէնով, արեւելահայերէնով, անգլերէն ('Օլտիզ' առաւելաբար), ռուսերէն,

արաբերէն, սպաներէն, եբրայերէն։ Բազմաթիւ ազգութիւններու ուրախ եւ այլ հանդիսութիւններու ընթացքին երգած եմ վերոյիշեալ լեզուներով ու երաժշտութեամբ։

Հրց.- *Լիբանան այցելութեանդ պատճառները որո՞նք են։*

Պատ.- Աշխատանքէ դուրս ժողովուրդի հետ ծանօթացում։ Պուրճ Համուտ ծնած եմ, կը ցանկամ աւելի մօտիկէն ճանչնալ Լիբանանի հայերը, վայելել անոնց քաջալերանքն ու նեցուկը։ Տէր Մեքոնեան հանդիսասրահին մէջ ալ համերգ տուինք, ’Լը Ուայօմ’ ճաշարանին մէջ ալ պարահանդէս ունեցանք ու շնորհակալ եմ որ զգացինք այս հերոս գաղութին քաջալերանքն ու սէրը մեր երաժշտութեան հանդէպ, ջերմ եւ հիւրընկալ մթնոլորտի մէջ։

Հրց.- *Այսօր արեւմտահայերէնով երգող քիչ երգիչներ կան։ Արդեօք կապեր հաստատա՞ծ էք Մայր Հայրենիքի դասական թէ ժողովրդական, էսթրատային երաժշտութեան արհեստավարժ շրջանակներուն հետ։*

Պատ.- Հայաստան բոլոր հայերուն կեդրոնն է։ Եթէ կ’ուզես ճանչցուիլ բոլոր աշխարհի հայութեան՝ Մայր Հայրենիքի միջոցով կ’ըլլայ։ Ես այս իրականութեան հաւատացողներէն եմ։ Իմ երգերուս երաժշտութիւնն ու բառերը գրելու համար այդ առիթը չեմ ունեցած դժբախտաբար։ Բայց յուսամ մօտ ժամանակներս այդ ցանկութիւնն ալ կ’իրականայ։

Հրց.- *Տարիներէ ի վեր կ’ապրիս Մոնթրէալ, ուր ձուլման անխնայ գործընթացը կը շարունակուի, կը հաստատե՞ս թէ հայ երգն ու երաժշտութիւնը հայապահպանման գլխաւոր գործօններէն են։*

Պատ.- Այո՛, հայ երաժշտութիւնը շատ կարեւոր դեր կը խաղայ հայապահպանման պայքարին մէջ։ Ամէն մարդ ազատ է իր կեանքի ընկերն ու ընկերուհին ընտրելու (հայ թէ օտար)։ Դժբախտաբար Մոնթրէալի մէջ հարսանիքներուն, ուր ելոյթ կ’ունենանք, կէսէն աւելին խառն ամուսնութիւններ են։ Եթէ այսպէս շարունակուի՝ չեմ գիտեր թէ հայ երաժշտութիւն գոյութիւն պիտի ունենա՞յ արդեօք 50 տարի ետք...։

Գալով Ամերիկայի միւս հայկական գաղթօճախներուն հետ մեր համագործակցութեան մասին՝ վերջերս պայմանագիր կնքեցինք ‘Արմինիըն Հերիթէճ Քրուզ’ին հետ’ որ նաւային շրջապտոյտներ կազմակերպող հայ աւանդական կազմակերպութիւն մըն է։ Աշխարհի բազմաթիւ երկիրներէն մասնակից նշանաւոր հայերու քարիպեան նաւարկութիւն մըն է, ուր շաբաթ մը ամբողջ անոնց պիտի հրամցնենք հայկական երգն ու երաժշտութիւնը։

Հրց.- Ի՞նչ է խօսքդ ու պատգամդ ուղղուած մեր ընթերցողներուն։

Պատ.- Շնորհակալ եմ բոլոր անոնց որոնք գրկաբաց ընդունեցին զիս այստեղ։ Միայն իրենց քաջալերանքով է որ հայ արուեստագէտները պիտի մնան, ծաղկին, ստեղծագործեն ապագայ սերունդներուն համար։

Հարցազրոյցը վարեց՝ Համօ Մոսկոֆեան
Մոնթրէալ – Պէյրութ (Հեռախօսով), 26 Օգոստոս 2011